իդեալը: Ասուլիսներին մասնակցող բոլոր բանասխոսների ելույթներում իշխում է այս հիմնական գիտակցությունը:

Ասուլիսներից առաջինը նվիրված է Շանթի «Հին աստվածներին»: Այսպիսի ընտրությունը պատահական չէր ոչ միայն այն իմաստով, որ Շանթի ինքնատիպ դրաման մեծ աղմուկ էր հանել արևելահայ գրական ու թատերական շրջաններում, այլև այն, որ «Հին աստվածները» իր գեղարվեստական առանձնահատկություններով ու արտահայտած գաղափարներով ավելի հարազատ էր արևմտահայ գրական շարժման ոգուն:

Բանախոսությամբ առաջինը հանդես է գալիս Տիգրան Չյոկյուրյանը: Չյոկյուրյանը Վարուժանի, Մեծարենցի, Ռուբեն Սևակի սերնդակիցն էր, նրանց նման դաստիարակվել էր դարասկզբի գեղապաշտ հոգեբանությամբ ու ըմբռնումներով, որոնք և դրսևորվում են նրա ստեղծագործական ու գրական-հասարակական գործունեության մեջ: Նա նաև ժամանակի գործուն քննադատներից էր, մեկը այն քչերից, որոնց քննադատական ելույթները ոչ թե դիպվածային բնույթ են կրում, այլ ներքնապես կապվում են իրար հետ՝ վկայելով հեղինակի հետևողական հայացքների մասին: Չյոկյուրյանի առաջին հոդվածները երևում են «Մասիսի» էջերում՝ 1905թ.: 1908թ. նա սկսում է աշխատակցել «Բյուզանդիոնին», իսկ 1911թ. Մ. Շամտանճյանի հետ ստանձնում է «Ոստանի» խմբագրությունը, որը նրանց ջանքերի շնորհիվ դառնում է այդ օրերի ամենահետաքրքիր գրական հանդեսներից մեկը:

«Հին աստվածների» մասին ասուլիսներում Չյոկյուրյանի հնչեցրած բանախոսության ոգին ոչ միայն վերլուծական է, այլև քննական-բանավիճական: Առաջին հարցը վերաբերում է Շանթի դրամայի ժանրային տիպին: Բանախոսը համաձայն չէ այն տեսակետին, թե «Հին աստվածները» պատմական դրամա է, քանի որ՝ «հոն ոչ պատմական շրջան, ոչ պատմական անձնավորություններ կան. չի կա նաև ատանկ շրջաններու հստակ բարոյական նկարագիր»: Հաջորդ խնդիրը վերաբերում է դրամայի թեմային: Որոշ քննադատներ գտնում են, որ այդ թեման «քրիստոնեության և հեթանոսության անհաշտ պայքարն է», ուրիշների կարծիքով՝ «վանական և աշխարհիկ կյանքի կռիվն է»: Չյոկյուրյանը հետևում է արևելահայ քննադատ Արշ. Ղազարյանի տեսակետին, թե՝ «այս գործը *մտքին* և *սրտին* հավիտենական կռիվը կը խորհրդանշե, այսինքն՝ *մտածման* և *զգացման*»: Իհարկե, Շանթի